աշխարհաց մասին կը խօսին. բազմաթիւ անգամներ հասած կ'ըսեն ի Վիրս՝ ինչպէս յԱղուանս օգնութեան, ջանք տարած նաեւ «Վրացերէն լեզուին» (Կոր. եւն). — միով բանիւ այնպէս՝ ինչպէս կը գրեն եւ մենք կը գրենք մեր Հայոց եւ մեր գաւառաց՝ օրինակ Տայոց եւն մասին եւ նոյնպէս Պարսից եւ այլազգաց համար: Այս ամէնը «սխա՞լ» է ուրեմն եւ մեր նախնիք պիտի ըսէ՞ն «Վրաց», «ի Վիրքս» եւն. եւ մենք ալ կը սխալի՞նք երբ կը խօսինք Վրաստանի եւ վրական ժողովրդեան եւն մասին: Բայց արդ այնպէս՝ ինչպէս կ'ըսենք Թուրք, Թուրքաց, Թրքերէն, Թուրքաստան եւն՝ իրապէս –ք հիմնական տառով անուան, այսպէս չէ՛ երբեք Վիրք, Վրաց, Վրացի եւն: Հայ լեզուն բարեբախտաբար չէ Ուրարտերէնի, Միտաններէնի եւ այլոց, նաեւ Փռիւգարէնի նման՝ լոկ արձանագրական լեզու մը մնացած, եւ որոնք մասամբ քիչ շատ, մասամբ տակաւին անբաւական կերպով լուսաբանուած են, եւ որոնց բառերու եւ բառաձեւերու մասին ներեալ ըլլայ աւելի կամ նուազ հաւանական, չատ անգամ աւելի անհաւանական մեկնաբանութիւններ տալու փորձեր ընել: Կենդանի լեզուի մ'այսպիսի անկարելի փորձ մ'ինքնին կը ցուցնէ թէ այն ամբողջ դրութեան հիմը խախուտ է: Եթէ կէտ մը կայ այսպիսի անուանց մէջ, որոնց գոնէ մէկ մասը նախ աշխարհագրական յորջորջանքներ են, ա՛յն է թէ ասոնց մէկ մասին եղակի ձեւը սիրով չի գործածեր մեր լեզուն: Սովոր չենք ըսելու Վիր մը (— Iber անուան կը համապատասխանէ եւ ուրիշ ոչինչ —) այլ՝ Վրացի եւն. բայց նոյնպէս Պարսք, Պարսից եւն կ'ըսենք, բայց ո՛չ եղակին՝ «Պարս» մը, այլ՝ Պարսիկ մը, պարսկերէն եւն: Նոյնպէս կ'ըսենք Տայոց եւ Գուգարաց աշխարհներ, բայց թէեւ կրնայինք ըսել Գուգար մը, կը նախընտրենք ըսել Գուգարացի եւ մանաւանդ Տայեցի: Սակայն առով Պարսք, Տայք եւ Գուգարք յոգնակի ըլլալէ չեն դադրիր. եւ ք արմատական չէ: Սիւնիք աշխարհէն ունինք «սիւնի» իբր տոհմանուն. բայց անհատի համար դարձեալ կը նախընտրենք սիւնեցի, եւ միւս ծայրը՝ Գամիրք աշխարհէ ու ազգէ՝ կ'ըսենք Գամրացի եւն:

Աւելորդ է երկարել կէտի մը մասին, որ արդէն խնդրոյ նիւթ չէ հայ լեզուին համար: Բայց ասի աւելցրնենք թէ Յ. Մարկուարտ ճշդիւ այս անուանց ձեւերու մասին գրած է իւր մէկ յօդուածին մէջ, որ իւր մահուանէ ետքը լոյս տեսած է այժմ՝ «Կաւկասականք» պարբերականին մէջ:

(Շարունակելի:)

Հ. Յ. Տ.

ԿԱՐՆԵՑԻ ՍԵՐՈՎԲԷ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԶԼԻՄԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Յովհաննէս Կարբեցու շրջանի պատմական անձնաւորութիւններուն մէջ առանձին տեղ է գրաւում Կարնեցի Սերովբէ արքեպիսկոպոսը. նա մեծ յաջողութեամբ ծախսեց իր խիզճը ժամանակի ամենազօր հրամանատար Պասկեւիչին, դարձաւ նրա գործիքը եւ լինելով փոքր անձնաւորութիւն, մեծ հետք թողեց ժամանակակից պատմութեան մէջ: Նրա նամակները Զիմեցի Յովհաննէս վարդապետին ընդդրկումեն այդ շրջանի ամենահետաքրքիր եւ ցաւոտ մոմենտներից մէկը եւ բնորոշ են ինչպէս իր՝ Սերովբէի, այնպէս եւ ժամանակաշրջանի համար:

Սերովբէն ծնուել է Կարին քաղաքում. նրա հայրը լուսաւորչական էր, մայրը՝ Կաթոլիկ. կրթութիւնը ստացել է Հռոմում, ուր նա ուսումնասիրել է հին եւ նոր լեզուներ. եղել է հայ կաթոլիկաց արեղայ Տաճկաստանում, յաջորդի պաշտօնով անցել է Բաղդադ, որտեղ նա յաջողեցրել է ուսուցչի պաշտօն ստանալ անգլիական դեսպանի ընտանիքում. ապա նա զիմում է Եփրեմ Կաթողիկոսին եւ ցանկութիւն է յայտնում լուսաւորչական դառնալու եւ ստանալով անգլիական դեսպանատնից այնտեղ պահուող հանգուցեալ նուիրակ Վրթանէս եպիսկոպոսի դանձը, գալիս է Էջմիածին եւ ծայրագոյն վարդապետութիւն ստանում 1811 թ.: Էջմիածնի մթնոլորտը իր աւանդական նիստ ու կացով եւ Ներսէս Աշտարակեցու անսահման իշխանութեամբ վանիչ ազդեցութիւն ունեցաւ Սերովբէի վրայ, մանաւանդ որ նա շուտով ընդհարուեց Ներսէսի հետ: Սերովբէն հեռացաւ Մոսկուա, որտեղ ստանձնեց Լազարեան ճեմարանի ուսուցչութիւնը: Ապա, երբ գնդապետ Ղազար Լազարեանը մեկնեց ռուս–պարսկական ռազմաճակատը, Սերովբէն 1827 թուին ուղեկցեց նրան Թաւրիզ եւ ճանապարհին ծանօթացաւ յոյն զեներալ Վլանգալիի հետ, որ վճռական դեր խաղաց նրա ապագայ կեանքում: Այդ ժամանակ վախճանուեց Բեսարաբիայի կառավարիչ Գրիգոր արքեպիսկոպոսը եւ Սերովբէն հետամուտ եղաւ այդ պաշտօնը ձեռք բերելու: Սակայն բաղդն այլ կերպ էր տնօրինել. նա ներկայացուեց զեներալ Վլանգալիի միջոցով Պասկեւիչին, որ այն ժամանակ նոր էր թշնամացել Ներսէսի հետ, որպէս վերջինիս հակառակորդ անձնաւորութիւն, որ մեծ հաճոյք պատճառեց զրաֆին եւ այդ օրուանից սկսուեց Սերովբէի յաստուկ գործունէութիւնը — Ներսէսին ամբաստանելը: Նա մնաց կոմսի մօտ եւ հետագայ ռուս–տաճկական պատերազմի ընթացքում՝ գլխաւորապէս Ներսէսի մասին տեղեկութիւններ

հաւաքելու, ապա եպիսկոպոսութիւն եւ արքեպիսկոպոսութիւն ստանալով, սկսեց խոշոր դեր կատարել հոգեւոր գործերում:

Եփրեմ կաթողիկոսը կարեւոր համարեց 1828 թ. Յուլիսի 4ին առանձին կոնդակ ուղարկել Ղարսի, Ախալցխայի, Բայազէտի եւ ռուս–տաճկական ճակատի այլ կէտերի բնակիչներին այն մասին, որ Սերովբէն նշանակում է Պասկեւիչի մօտ՝ նրանց «օգնական». կոնդակի մէջ բանեցուած են զգոյշ արտայայտութիւններ: Մի կոնդակ էլ ուղարկեց Սերովբէին, որտեղ բացատրուած է այն զգուշութեան մասին, որ պէտք է ձեռք առնել՝ ի նկատի ունենալով Օսմանցւոց իշխանութեան տակ գտնուած հայերին: Այդ կոնդակները հետեւեալներն են.

ՕՐԻՆԱԿ

1. Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ Կաթողիկոս ամենայն հայոց եւ ծայրագոյն պատրիարգ առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նաեւ մեծի մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի:

Ողջոյն քրիստոսաւանդ մատուցանեմ սիրելի որդւոց սրբոյ լուսաւորչին հայոց եւ մայր Աթոռոյ նորա հոգեւորականաց եւ մարմնաւորականաց՝ որք բնակեալ կայք ի Կարս, Ախալցխայ, ի Պայազիտ, եւ ընդ ամենայն տեղիս ուր եւ հասանել ունիցին քրիստոսազօր զինուորութիւնք մեծ կայսերութեան ամենայն ռուսաց: Այլեւ աղօթս առնեմ զի ամենարաւական շնորհն Աստուծոյ հովանացեալ ի վերայ ձեր ամենեցուն՝ ազատեսցէ զձեզ եւ զամենայն զժառանգաւորս ձեր յամենայն վտանգից պատերազմականաց եւ յամենայն փորձանաց մարմնականաց եւ հոգեկանաց, եւ պահպանեսցէ զկեանս ձեր ամենեցուն մեծ ողորմութեամբ իւրով՝ որ ի վեր է քան զմիտս եւ զբանս՝ անսասանելի ամենայնիւ. ամէն:

Անքննելի են մարդկանց միշտ ամենայն գործք Աստուծոյ, ըստ որոյ եւ պարտաւորին մարդիկք առ հասարակ յամենայն պատահմունս կարդալ առ Աստուած եւ ադաչել զողորմութիւն նորա եւ զգթութիւն, որպէս ուսուցանէ ինքն Աստուած, կարդացես առ իս յաւուր նեղութեան քոյ, ես փրկեցից զքեզ, եւ դու փառաւոր արասցես զիս: Այսպէս ուրեմն ի սմին ժամանակի յորժամ զօրք նորին կայսերական մեծութեան յառաջ շարժեցան ի սահման հզօր տէրութեան օսմանցւոց, փրկութիւն եւ ազատութիւն ամենայն մարդկան առաւելապէս պարտին լինել ադաչանօք ամենեցուն առ Աստուած, սակայն ըստ որում պարտաւորութիւն էր մեզ որպէս հոգեւորական հօր ամենայն ազգի հայոց, նորին ադաչաւ բարւոք դատեցաք ընդ զօրաց իւրոց կայսերական մեծութեան ունել զսիրելի որդի սրբոյ եկեղեցւոյ հայոց եւ զհարազատն մեր զրաբարժանապատիւ հաւաքելու, ապա եպիսկոպոսութիւն եւ արքեպիսկոպոսութիւն ստանալով, սկսեց խոշոր դեր կատարել հոգեւոր գործերում:

Եփրեմ կաթողիկոսը կարեւոր համարեց 1828 թ. Յուլիսի 4ին առանձին կոնդակ ուղարկել Ղարսի, Ախալցխայի, Բայազէտի եւ ռուս–տաճկական ճակատի այլ կէտերի բնակիչներին այն մասին, որ Սերովբէն նշանակում է Պասկեւիչի մօտ՝ նրանց «օգնական». կոնդակի մէջ բանեցուած են զգոյշ արտայայտութիւններ: Մի կոնդակ էլ ուղարկեց Սերովբէին, որտեղ բացատրուած է այն զգուշութեան մասին, որ պէտք է ձեռք առնել՝ ի նկատի ունենալով Օսմանցւոց իշխանութեան տակ գտնուած հայերին: Այդ կոնդակները հետեւեալներն են.

ՕՐԻՆԱԿ

1. Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ Կաթողիկոս ամենայն հայոց եւ ծայրագոյն պատրիարգ առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նաեւ մեծի մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի:

Ողջոյն քրիստոսաւանդ մատուցանեմ սիրելի որդւոց սրբոյ լուսաւորչին հայոց եւ մայր Աթոռոյ նորա հոգեւորականաց եւ մարմնաւորականաց՝ որք բնակեալ կայք ի Կարս, Ախալցխայ, ի Պայազիտ, եւ ընդ ամենայն տեղիս ուր եւ հասանել ունիցին քրիստոսազօր զինուորութիւնք մեծ կայսերութեան ամենայն ռուսաց: Այլեւ աղօթս առնեմ զի ամենարաւական շնորհն Աստուծոյ հովանացեալ ի վերայ ձեր ամենեցուն՝ ազատեսցէ զձեզ եւ զամենայն զժառանգաւորս ձեր յամենայն վտանգից պատերազմականաց եւ յամենայն փորձանաց մարմնականաց եւ հոգեկանաց, եւ պահպանեսցէ զկեանս ձեր ամենեցուն մեծ ողորմութեամբ իւրով՝ որ ի վեր է քան զմիտս եւ զբանս՝ անսասանելի ամենայնիւ. ամէն:

Անքննելի են մարդկանց միշտ ամենայն գործք Աստուծոյ, ըստ որոյ եւ պարտաւորին մարդիկք առ հասարակ յամենայն պատահմունս կարդալ առ Աստուած եւ ադաչել զողորմութիւն նորա եւ զգթութիւն, որպէս ուսուցանէ ինքն Աստուած, կարդացես առ իս յաւուր նեղութեան քոյ, ես փրկեցից զքեզ, եւ դու փառաւոր արասցես զիս: Այսպէս ուրեմն ի սմին ժամանակի յորժամ զօրք նորին կայսերական մեծութեան յառաջ շարժեցան ի սահման հզօր տէրութեան օսմանցւոց, փրկութիւն եւ ազատութիւն ամենայն մարդկան առաւելապէս պարտին լինել ադաչանօք ամենեցուն առ Աստուած, սակայն ըստ որում պարտաւորութիւն էր մեզ որպէս հոգեւորական հօր ամենայն ազգի հայոց, նորին ադաչաւ բարւոք դատեցաք ընդ զօրաց իւրոց կայսերական մեծութեան ունել զսիրելի որդի սրբոյ եկեղեցւոյ հայոց եւ զհարազատն մեր զրաբարժանապատիւ Սերօբէ վարդապետն Կարնեցի՝ յատկապէս վասն այնորիկ, զի յամենայն կարելի պատահմունս զանազան օգնական ձեզ՝ զհարկաւորսն վասն ձեր յայտնելով ձեզ եւ նորին պայծառափայլութեան յաղթող զօրապետի ռուսաց զեներալ Օտինֆանտէրի զեներալ ադիւտանտ գրաֆ Երեւանայ Իւան Ֆեդորիչ Պասկեւիչի, եւ խնդրել զհովանաւորութիւն նորա ձեզ: Յաղագս որոյ ահա գրեմ եւ պատուիրեմ ձեզ ամենեցուն, ընկալնուլ զնա որպէս զհարազատ մեր, եւ լսել բանից նորա, զոր առաջադրել ունիցի ձեզ ըստ հրամանաց նորին պայծառափայլութեանն յիշեալ զօրապետի, եւ այնպէս ըստ արժանի քրիստոնէութեան ձերում ջանալ ցուցանել ամենայն մեծի եւ փոքր զօրաց մեծ կայսերութեան ամենայն ռուսաց զհարազատութիւն ձեր եւ զհնազանդութիւն ձերում հայկական կոչման արժանաւոր կատարելագոյն հաւատարմութեամբ եւ ամենաջերմեռանդ սիրով, եւ ունիջիք զյոյս, զի թէպէտ եւ պատերազմական նեղութիւնքն բազմապատիկ իցեն վասն ձեր, բայց զի սիրտ թագաւորաց ի ձեռն Աստուծոյ են, որպէս եւ գրեալ է, առանց իրիք երկմտութեանց կարող եմք հաւատալ, թէ պատերազմութիւնք այսոքիկ եւս չեն առանց աստուածային կամաց, եւ առանց ներգործութեանց մեծ ողորմութեանց նորա, որ սքանչելապէս միշտ սովոր է, յաւելանից ժամանակաց յայտնի առնել իւրոց երկիւղացած, ոչ սկզբամբ ներգործութեանցն իւրոց այլ ի վեր քան զանձկալութիւն մարդկան լցեալ լիացեալ ամենապատեհ բարութեանց արդեամբքն կատարածին աստուածային խոր իմաստ տնօրէնութեամբ սկսուածոյն:

Գիտեմ, զի հաւատարմութիւն ամենայն հայոց ազգի բնաւորեալ է յանձինս եւ ի կամս նոցին մինչեւ ցվախճան միշտ պահպանել զայն առանց իրիք արատոց, որով եւ ամենայն տէրութիւնք հաւատարիմ են միշտ յիւրաքանչիւր կարծիս իւրեանց վասն ամենայն հայոց ի մասին անփոփոխելի հաւատարմութեանց նոցին. այլ զի ի զործս պատերազմականս յայտնեցեալս ի հզօր տէրութեանց կարդացող եւ յօրինող՝ է ինքն Աստուած տէրն տէրանց եւ թագաւորն թագաւորաց, նորին ադաչաւ յետ վախճանի պատերազմութեանց՝ ում եւ թողուլ ունիցի Աստուած այնմ պարտաւոր են առ հասարակ հնազանդել, եւ ծառայել հոգին հաւատարմութեամբ իւրեանց, հաւատացեալ բանիցն առաքելականաց, թէ ոչ ուստեք է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, եւ որ հակառակ կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ կայ, ըստ որոյ հնազանդելոցն Աստուծոյ ո՛չ անկանի ընդ մեղադրութեամբ հաւատարմութիւն հաւատարմաց. նա մանաւանդ զի զուք քրիստոնեայք ոչ գտանիք զինակիր, եւ չէք մասնակից զի-

© National Library of Armenia

նուրբականութեանց, այլ յատկացեալ է ձեզ միայն յամենայն տէրութեան օսմանցւոց կալ հնազանդ իշխանութեանց, եւ պաշտպանել զկեանս ձեր ի ներքոյ հովանաւորութեանց եւ խնամակալութեանց իշխողացն ձերոց. ըստ որոյ եւ այժմ յետ մնալոյ ձեր ընդ իշխանութեամբ ամենաբարեպաշտ զօրաց յաղթող կայսերութեան ամենայն ռուսաց՝ ոչինչ մեղադրութիւն ձեզ եւ ձերոց ազգական հաւատարմութեանց համարեալ լինի. նոյնպիսի կատարեալ հաւատարմութեամբ ձերով յայտնելն զձեզ յաղթողաց, այլ առաւելապէս զովութիւն ձեզ կարէ գտանել համեստութեամբ եւ խաղաղութեամբ հոգւոյ ձեր կալն ձեր ձերում քրիստոնէութեան արժանաւոր բարեկրօնութեամբ հնազանդութեամբ եւ զովանի հաւատարմութեամբ: Ապա թէ ոչ՝ մեք առաջին եւ գլուխ եկեղեցւոյ հայաստանեայց, ովքո՞ւրդ կարելի համարեցի մեզ, թէ ընդդէմ ասատուածային պարտաւորութեանց մերոց յայտնելոց լցեմք մեք զմեզ զրզռիչ չարեաց գրելովն մեր առ ձեզ վասն այսպիսի ամենաբարեպաշտ քաղաքավարութեամբ պահպանելոյ զկեանս ձեր ի ժամանակի յայսմիկ ահաւոր պատերազմութեանց:

Ողջ լերուք, եւ շնորհք Տեառն եղիցի ընդ ձեզ եւ ընդ հոգւոյ ձեր միշտ. ամէն:

Ի Թիֆլիս, 1828, Յուլիս 4:

Կաթողիկոս ամենայն Հայոց:

2. Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ եւ շնորհիւ նորին կաթողիկոս ամենայն հայոց, եւ ծայրագոյն պատրիարգ առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի. նա եւ մեծի մայր Աթոռոյ սրբոյ կաթողիկէ էջմիածնի: Ողջոյն քրիստոսական հարազատի մերոյ բարձր արժանապատիւ Սերոբէ վարդապետի սիրելի որդւոյ սրբոյ եկեղեցւոյ հայոց. խնդալ ի տէր:

Հարկաւոր համարեցաք առաքել առ ձեզ ընդ այսմ զգիր առ հասարակութիւն Հայոց բնակեցելոց ի Կարս, Ախլցխայ, ի Պայազիտ, եւ ընդ ամենայն տեղիս, ուր եւ հասանելոց լցեն քրիստոսազօր զօրք ռուսաց, այլ զի հարկաւոր է այն եւ բազում զգուշութեանց, գրեցաւ այնպէս, որպէս եւ տեսանէք, որպէս զի պահպանեալ լիցի ըստ օգտի փրկելոցն եւ օգուտն եղելոց ի ներքոյ բանաւորութեանց հեթանոսականաց: Եւ յանձն առնեմ ձեզ, որքան եւ բերել ունիցի կարողութիւն ձեր՝ առաւելուլ զամենայն զգործս ձեզ պատկանեալ կամ յանձնեցեալս ի կառավարութեանց այնպէս զի հոչակն այնորիկ ունիցի պահպանել եւ զգտանեցեալսն ընդ ամենայն իշխանութեանց օսմանցւոց առանց երեւելի վնասուց. եւ եղիցի այսպէս՝ յորմէ պարտաւորեսջիք զհասարակութիւն հայոց անկելոց ընդ հովանաւորութեամբ քրիստոսազօր տէրութեան պահպանել զյարդ եւ զարժանաւորութիւն հասարակութեան մեծաց եւ փոքրուց սառակիտոսաց առաւել քան զառաջինն. դիտացեալ թէ այնպիսի քաղաքավարութիւն նոցին ունի ջատագովել զինքեանց որպէս յառաջոյ ամբարշտաց հեթանոսաց նոյնպէս եւ յառաջոյ ամենաբարեպաշտ տէրութեան ռուսաց, եւ ամենայն զօրապետաց եւ զօրաց նորին:

Առաքեմ ընդ այսմ առ ձեզ եւ զգիր առ նորին պայծառափայլութիւնն զրաֆ Երեւանայ եւ բարեբախտ զօրապետ զեներալ ադիւտանտ Իւան Ֆեոդորիչ Պասկեւիչ ողորմած տէրն միայն յաղագս նախանցեալ ծառայութեանց եւ արժանաւոր հաւատարմութեանց Գրիգոր արքեպիսկոպոսին Շամչատինոյ[1] անտես եղելոյ մինչեւ ցայժմ՝ ի նախորդաց նորին պայծառափայլութեանն, զոր մատուցեալ առ ինքն, զուք եւս ի զէպ լինելն ձեզ չունիցիք խնայել զպատկանաւորսն առ հոչակեալ հարազատական պաշտօնատարութիւնն այնմ հարազատի սրբոյ եկեղեցւոյ հայոց յայնպիսում ժամանակի հարկաւորութեանց:

Մեք առ վաղիւն ճանապարհորդեսցուք հանդերձ Աստուծով ի սուրբ կաթուղիկէն էջմիածին, յետ որոյ, թէ ունիցիք գրել առ մեզ, անդր առաքել կարող էք:

Զողջոյն առ ի մէնջ նուիրեսջիք բարեպաշտութեամբ հոչակեալ ջատագովելոյն ի բազմաց նորին արժանանձնութեան Վլանկալւոյ եւ մերայնոց ամենեցուն, որք կանն ի բանակի այդր. եւ շնորհք տեառն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեցուն նոցա միշտ ամէն:

Ի Թիֆլիս, 1828 Յուլիս 4:

Կաթողիկոս ամենայն Հայոց:

Սերովբէի թշնամութիւնը Ներսէսի հետ, նրա ազատութիւնը եւ Պասկեւիչի միջոցով պատիւների հասնելու զօրաւոր ենչը դրդում էին նրան երեւան գալ ամեն տեղ, որտեղ պահանջւում էր դաւադրութիւն, կեղծիք, բռնութիւն: Նրա հետագայ ամբողջ գործունէութիւնն այդ բնոյթն ունի. կանգ առնենք մի քանի մոմենտների վրայ:

1828 թ. Նոյեմբերին Պասկեւիչին էջմիածնից կեղծ նամակներ գրուեցին կաթողիկոսի, սինոդի եւ միաբանութեան կողմից, որտեղ շնորհաւորում էին կոմսի տարած յաղթութիւնները եւ նրա պաշտպանութիւնն էին խնդրում ընդդէմ հալածանքների: Կոմսը շնորհակալութիւն յայտնեց բոլորին,

[1] Սա այն հոչակաւոր Մանուչարեանց Գրիգոր եպիսկոպոսն է, որ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ աչքի ընկաւ՝ մի չարք հերոսական գործողութիւններով՝ պարսկական զօրագնդերի դէմ եւ ի միջի այլոց Ներսէս Աշտարակցու կարգադրութեամբ Եփրեմ կաթուղիկոսին Հաղբատ վանքից հետ առած ճեղքեց Թուրքաց հրոսակները եւ Թիֆլիս հասցրեց:

որ սակայն զարմանք եւ իրարանցում առաջացրեց էջմիածնում: Պարզ էր, որ կեղծիք էր կատարուել, բայց ոչ ոք չէր ուզում խոստովանել, որ ինքն է անողը եւ բոլորը ստորագրութիւն տուեցին, որ իրենք չեն թղթերի հեղինակը: Վերջապէս, երբ որոշեցին դիմել Պասկեւիչին եւ նրանից խմանալ դաղտնիքը, Գալուստեան (Բէհբուդեան) Զաքարիա, Վաղարշարպատցի Աբրահամ, Մատտաբեցի Ղուկաս եւ Շահխաթունեան Յովհաննէս վարդապետները չտապեցին յայտնել, որ իրենք են գրել վերոյիշեալ թղթերը Սերովբէ վարդապետի թելադրութեամբ: Պարզ էր զրդռպատճառը. նամակների մէջ ակնարկւում էր բռնութիւն Ներսէսի կողմից, որից պէտք է պաշտպանէր Պասկեւիչը: Եփրեմը եղելութեան մասին յայտնեց Պասկեւիչին, որ սակայն կարիք չը համարեց պատասխանել...

Ի հարկէ, Ներսէսը լաւ ճանաչում էր իր թշնամուն եւ հարկը պահանջած դէպքում դառնութեամբ արտայայտում էր այդ. այսպէս՝ 1829 թ. Յունուարի 7ին Կոմս Դիբիչին ուղղած մի գրութեան մէջ Ներսէսն ասում է. «Հարկ եմ համարում յարակցել, որ այս բոլոր խորամանկ որոգայթներ լարողը է Սերովբէ վարդապետը» եւ այլն (Կովկասի Հայք, գ. I, 496):

1829 թ. Մայիսի 3ին Պասկեւիչը զրգռուած Ներսէսի յանդգնութիւնից, որով նա բողոքել էր Կոմսի արարքների դէմ, մի թուղթ գրեց օտար դաւանութեանց գործերի նախարար Բլուդովին, որտեղ ասում է մի չարք ամբաստանութիւններ Ներսէսի մասին, ի միջի այլոց այնպիսի անհեթեթ մեղադրանքներ, ինչպէս հետեւեալը. Ներսէսի կողմնակիցները տարածել են, որ իբր թէ կայսեր աչքերը ցաւացել են եւ Ներսէսը հրաւիրուել է Պետերբուրգ, աղօթքով բժշկել է կայսեր աչքերը եւ այժմ նրա մօտն է: Պասկեւիչը խնդրում էր պահել Ներսէսին Բեսսարաբիայում: Այդ ամբաստանութիւնների մասին սինոդը տեղեկացնում է Ներսէսին, որ «Սերովբէ վարդապետն յետ չափազանց արարողութեան զգուեցուցանելոյ իւրոյ եւ զայթակղեցուցանելոյ զհասարակութիւն մերազնէից ի Բայազէտ, իւրով անուղղայ վարուք՝ անվայելչական կրօնաւորի ... ասութեան» (Անդ, էջ 512) ահա այստեղ զանազան միջոցներով հաւաքում է վերոյիշեալ տեղեկութիւնները եւ յայտնում Պասկեւիչին:

Սերովբէն Պասկեւիչի անմիջական լրտեսն էր եւ ինչպէս լինում է այդպիսի դէպքերում, նաեւ խորհրդատուն: Նա ներներկայացրեց Յովհաննէս եպիսկոպոս Կարբեցուն Պասկեւիչին եւ խորհուրդ տուեց Վրաստանի թեմի առաջնորդ նշանակել նրան: Նա էր, որ իշխան Բէհբուդեանի, Շահան Զրպեանի եւ Կոլլեժսկի ասեսոր Օշկինի հետ մտաւ հայոց եկեղեցական գործերի, «Գաղտնի կոմիտեի» մէջ, որ պէտք է կազմէր այդ գործերի բարեկարգութեան նախագիծ: Պասկեւիչն էլ գիտեր գնահատել հաւատարիմ Սերովբէին. նա որոշեց Հաշտարխանի առաջնորդութիւնը Սերովբէին տալ, բայց քանի որ դրա համար պահանջւում էր նրա եպիսկոպոսանալը, նրան իշխան Վ. Բէհբուդեանի հետ միասին ուղարկեց Եփրեմ կաթողիկոսի մօտ (1830 թ. Մայիսին) եւ նրանք ստիպեցին գտամեալ ծերունուն, որ աչքերի կուրութեան պատճառով 1821 թուից ի վեր ոչ մի ձեռնադրութիւն չէր արել, բացառութիւն անել Սերովբէի համար, եւ նա մեծ տառապանքով եպիսկոպոս ձեռնադրեց Սերովբէին (1830 թ. Մայիսի 22ին)...

Շուտով Կոմսի պահանջմամբ Սերովբէին շնորհուեց եւ արքեպիսկոպոսութիւն եւ նա նշանակուեց Հաշտարխանի թեմական առաջնորդ: Պասկեւիչի թուղթը Եփրեմին հետեւեալն է.

—

1.

Գերապատիւ Յոհաննէս վարդապետ.

Իմ մտերիմ եղբայր:

Խոստումն անդժբելի յիմ զիմաց, եւ յուսամ վստահ տեսանել զկատարումն եւ ի ձեր զիմաց: Զգիր Սրբազնագոյն Վեհափառութեան հոգեւոր ծնողի իմոյ ինքնդ մատուցեալ ընթերցջիր եւ անհետ արա. աշխատ լեր զի ընկալցի զիսորհուրդ հաւատարմագունին յորդւոց իւրոց. արա՛ ինձ յայտնի պատասխանի ի վաղիւն: Մնդրեա՛ դարձեալ յիմ զիմաց զի գրել Ձեզ հրամայեսցէ զիր բարեկամական առ գրաֆն Երեւանայ, որով ըստ մտաց վկայականին Ձեռնադրեան իմոյ յայտնեսցի թէ որպէս տէրութիւն եւ գրաֆն զիս հաւատարիմ եւ արժանաւոր ճանաչեն եւն, նոյնպէս եւ ինքն. եւ յատուկ որդի հաւատարիմ եմ նմա: Զայս լաւ գրելով հասուսջիք ինձ վաղիւն, կամ եթէ ոչ ի Կարանթէնն կէրկէռու:

Առ ժամօրհնող Փիլիպպոս Հայր սուրբն զիր գրեցի եւ առաքեցի երեք պաճալլը, խնդրեմ ի նմանէ մուրհակ ընդունելոյն առնուլ եւ վաղիւն ինձ հասուցանել:

Ողջագուրելով զՁեզ՝ եմ խկութեամբ հոգւոյ

Մտերիմ եղբայր Սերովբէ
վարդապետ:

Երեւան, 6 Յունիսի 1830:

—

2.

Գերապատիւ Յոհաննէս Սրբազան Արքեպիսկոպոս:

Իմ ողորմած Հայր:

Ի 10 Յունիսի թողեալ զերեւան՝ ազօթիւք ձերովք հասի ի 18 նոյն ամսոյ ի

© National Library of Armenia

Տփխիս։ Կարծեմ թէ հարկեցայց դնալ ասսի Ախալքալաք եւ անտի Ախլցխայ. բայց չի՛ք տակաւին հրաման յայտնեալ։ Պայծառափայլ Ֆէլտմարեշալն ի 24 ամսոյս ունի ներկայանալ նորին կայսերական Մեծութեան. ի 14 Յուլիսի գառնալ անդրէն ի վիճակ իւր։ Ամուսին նորա եւ տունն ողջոյն են ասա։

Սպասեմ տեսանել զբարին զոր խոստացայք յառաջացուցանել այդր եւ ասա. յայնժամ ի ձէնջ կարծեցեալ թուլութիւն իմ ի քաջասրտութիւն փոխարկեսցի. այժմ մերկապարանոց եղեւ Ձեզ օգտակարն եւ վնասակարն. առաջնոյն կցորդ զիս գայլիք հանապազ։

Համբուրելով զաստուածարեալ աչ Ձեր եմ կատարեալ պատուով

Գերապատիւ սրբազան Հայր

Ամենախոնարհ ծառայ Ձեր
Սերովբէ Եպիսկոպոս։

Տփխիս, 21 Յունիսի 1830։

—

3.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Մտերիմ եղբայր իմ։

Յելից իմոյ յԵրեւանայ ցՏփխիս թէ զի՛նչ անցք անցին՝ կարէք տեղեկանալ ի թղթոյ Նորին Վեհափառ սրբութեան։ Սպասեմ ի ձէնջ բազում ինչ զիտել. եւ մանաւանդ առաջարկութիւնն իմ յետին՝ որ առ հոգեւոր ծնողն իմ։

Մնդրեմ յականէ յանուանէ ողջունել զամենայն եղբարս իմ, եւ յորդորել՝ զի զսէր իւրեանց վառ պահեսցեն առ իս եւ առ միմեանս։

Մնամ իսկական պատուով

Ամենախոնարհ ծառայ Ձեր
Սերովբէ Եպիսկոպոս։

Թիֆլիս, 1830, Յունիսի 21։

—

4.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր։

Կնեազ Բէհբուդովն զոլով հեռի ի ձէնջ՝ խորհուրդ տամ առաքել զթուղթ ձեր ապահով եղանակաւ ի ձեռս Դաւիթ խանին Մելիք Շահնազարեանց, եւ անհոգ լերուք, զի նա հասուսցէ ինձ անվտանգ եւ ես յոյժ չնորհակալացց զՁէնջ։

Յովսէփ վարդապետ եղբայրն մեր ծանուցեալ էր ինձ եթէ Վեհափառ Տէրն հրաման գրեաց ասա զհայր Ալամդարն առաքել ի Հաղբատ, ապա զի՞ է զի սա յանդգնի աւելի քան զերեկն եւ զեռանդն հակառակել բարձր կամաց ընդհանուր Հայրապետին, եւ վրդովեցուցանել զվիճակն. զի արդ ոչ զարման մատուցանել փութան եղբարք մեր այսմ անտանելի չար եւ զայթակղեցուցիչ գործոյ։ Թո՛ւի ուրեմն թէ ի ծածուկ պաշտպան են ապստամբութեան եւ անհնազանդութեան սորա։ — Մնդրեմ փութով զիմ տարակուսանս լուծանել բացայայտ եւ ճշմարտապատում բանիւք։ — Գիտեմ զի հարիւրաւոր սուտ համբաւս ընդունիք ասսի. բայց հաւատա՛ ինձ. չի՛ք ինչ համբաւ այնպիսի. միայն զայս գիտասջիք զի գրաֆին եհաս ի Ս. Պ. բուրդ ի 23 Յունիսի. եւ Կայսրն ի 25 նոյն ամսոյ. լի են կածէթք փառաւոր անուամբք Գրաֆին. եւ վերջին համբաւն 7 այսր ամսոյ է, զի ունի գառնալ ի 23 ի գլխաւոր բանակն Կովկասու։ Դեռ ոչինչ գհանգեւոր գործոց մերոց։

Սպասելով գիտել փութով զհանգամանս Ձեր եւ իրացն ինձ պատկանելոց գրկափարեմ զՁեզ եւ եմ մեծաւ պատուով։

Ամենախոնարհ ծառայ եւ եղբայր ձեր
Սերովբէ վարդապետ։

Թիֆլիս, Յուլիսի 26, 1830։

Առ բարձրապատիւ Յովհաննէս
Վարդապետ Դրիմցի Ատենադպիր
Նորին վեհափառ Սրբութեան
Ի Սուրբ Աթոռն։

—

5.

Բարձրապատիւ Յովհաննէս վարդապետ

Իմ մտերիմ եղբայր։

Ընկալայ զերկաքանչիւր թուղթս Ձեր հանդերձ համօրէն թղթովք գրելովք ի Նորին Վեհափառ Սրբութենէն եւ ի գերապատիւ աւագ լուսարար Սրբազան Հօրէ. զորս առաքեալ էիք յատուկ սուրհանդակաւ՝ ընկալայ յառաւօտու 9դ աւուր ամսոյս. զմիւսս հանդերձ զգեստիւք ի նմին աւուր յերեկոյի։ Զգիմել Յարութիւն վարդապետի ի սուրբ Աթոռդ, եւ զնպատակ նորա իմացայ մինչդեռ էր նա ի Թիֆլիս. թերեւս յաջողեսցէ նա գործել զո՛ր չէ արժան. ոչ կամի զեռ նա ի միտ առնուլ, եթէ այսուհետեւ ոչինչ վճարի առանց հրամանի բարեխնամ Տէրութեան։

Գալ իմ ի սուրբ Աթոռդ յոյժ ցանկալի. մանաւանդ եթէ հոգեւոր ծնողն իմ հրամայէ, եւ անձն իմ հարկաւոր այդր երեւեցաւ, բայց եթէ այժմ պակասիմ ասսի՝ ժողովուրդք կարնոյ, զերդաստանք իրր հինգ հազար կոտորին ի սովէ եւ ի ցրոյ. վասն զի չի՛ք բնաւ հայ ի գաւառս, եւ ոչ պատրաստեալ բնակութիւնք ի քաղաքիս, ուր են իրր 2000 տունք գրեթէ բացգեղեալք։ Միւս՝ զի զեռ ոչինչ հրաման ինձ լեալ է յայտնի ի Պայծառափայլ Գրաֆէ, եւ առանց հրամանի նորա չարժիլ իմ ասսի՝ է յանցանք ընդդէմ Տէրութեան։

Ըստ այսմ ոչ գիտեմ թէ զի՞նչ հնարաւոր եղիցի ինձ կատարել զոր հրամայեն։

Այլ դուք գոտի ընդ մէջ պնդեալ՝ հաստատուն լերուք զի մտերմութիւն Ձեր պղպաբերեսցէ ըստ խոստման իմում։

Ողջո՛յն տուք սիրեցեալ հարց եւ եղբարց իմոց, եւ լերուք ողջ։

Մտերիմ եղբայր Ձեր
Սերովբէ վարդապետ։

Ախլցխայ, Սեպտ. 11, 1830։

Ի կողմանէ ձեր ոչ գիտեմ թէ զինչ արարից. դուք հարկաւոր էք Աթոռդ. եթէ կարող եղէց տալ Ձեզ զպատշաճաւոր պատիւ եւ բաւականութիւն՝ մեցցէ՛ք. եթէ ոչ յաջողութեամբ եկեսջիք ի Թիֆլիս, եւ կամառ իս։ Փութով յայտնեցից Ձեզ առնել զմին յերկուց ասսի։

Առ բարձրապատիւ Յովհաննէս
Վարդապետն Ատենադպիր Դրիմցի։

Ի Սուրբ Աթոռն։

Ի 19 Սեպտեմբ՚ ասացայ 1830։

Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾԸ

—

Ցիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սովորաբար ընդարձակ կենսագրականներ գրել են եւ գրում են հայ գրական կամ եկեղեցական գործիչի համար։ Չեմ յիշում թէ հայ դրամատէրն ու վաճառականը երբ եւ իցէ արժանացած լինի այս պատուին։ Ուստի հարկ եմ համարում կանխապէս պարզել թէ որո՞նք են այն պատճառներն, որ դրդել են ինձ մի համեստ հայ վաճառականի կեանքն ու գործունէութիւնը ծանօթացնել ընդհանրութեան։ Դրա համար բաւական եմ համարում յառաջ բերել այստեղ համառօտակի՝ իր կատարած գործերն, որոնց մասին մանրամասնօրէն պիտի խօսիմ գրուածքիս ընթացքում։

Ա. Իբրեւ վաճառական։

Աղեքսանդր Մանթաշեանց[1] դեռ եւս պատանի հասակում, ձեռնարկած է տեւեւ

[1] Ես գրում եմ Մանթաշեանց (ց-ով), որովհետեւ հանդուցեալն իր անունը ստորագրում էր հայերի գրած ժամանակ՝ Մանթաշեանց։ Իսկ ռուսերէն՝ ըստ տիրող սովորութեան, Манташев նոյնը եւ օտար լեզուներով՝ Mantacheff։ Սկզբները՝ նա գործածել է նաեւ Mantachoff, o-ով, այս պատճառով էլ նրա հին, Մանչէսթրի ծանօթները, մինչեւ վերջը նրա անունը գրում եւ արտասանում էին Մէնթէչօֆ, անգլիական հնչմամբ։

տարական ընդարձակ յարաբերութեան Եւրոպայի եւ Կովկասի մէջ։ Երկար ժամանակ Անգլիայում մնալով իւրացրած է անգլիական լուրջ առեւտրականի ձեռնարկու ոգին, եւ օրինակ է հանդիսացած Կովկասի միւս հայ վաճառականներին։

Նա հիմնած է մեծագոյն հայկական արդիւնաբերական–առեւտրական ընկերութիւնն, որ գոյէց երբ եւ իցէ գոյութիւն է ունեցել հայերիս մէջ։ Նրա այս լայնածաւալ ձեռնարկութիւնը՝ բացի Կովկասից, ուր գտնւում էին նրա նաւթահանքերն եւ գործարանները, տարածուած էր եւ իր սեպհական մասնաճիւղերն ունէր, Ռուսաստանի, Լեհաստանի, Թիւրքիայի, Ռումանիայի, Անգլիայի, Գաղղիայի, Եգիպտոսի, Պարսից Ծոցի եւ Հնդկաստանի զանազան քաղաքներում։ Այս բոլոր տեղերում, ինչպէս եւ ընկերութեան կենդրոնավայրում, գլխավարները հայեր են եղած, որով ամէն տեղ ներկայացել եւ պահպանուել է ընկերութեան հայկական ազգային հանգամանքը։

Իր այս սեպհական ընկերութիւնից զատ նա կամ անձամբ հիմնել է՝ եւ կամ մասնակցել է ու զարգացրել, նաեւ ուրիշ հայկական առեւտրական ձեռնարկութիւններ, տարբեր անուններով։

Նա իր ձեռքն է առել Կովկասի գլխաւոր դրամատունն, իբրեւ նրա մեծագոյն բաժնետէրն եւ այդ Բանկի միջոցով Կովկասի հայ վաճառականներին վարկ ու դիւրութիւններ է ընծայել իրենց գործերն ամրացնելու եւ ընդարձակելու։

Աղեքսանդր Մանթաշեանց՝ թէ իր սեպհական ընկերութեան եւ թէ իր տիրած միւս առեւտրական եւ բանկային ձեռնարկութիւնների մէջ միշտ մեծ մասամբ, ստուար թուով հայ պաշտօնեաներ եւ հազարաւոր հայ բանուորներ է գործածած եւ այդ կերպով նրանց նիւթական բարեկեցութիւնը պատճառ դարձած։

Առ այժմ այսչափ նրա վաճառականական գործունէութեան մասին։

Բ. Իբրեւ բարեգործ։

Աղ. Մանթաշեանց ստացած է իր ծննդավայր Թիֆլիսում քաղաքային առեւտրական դպրոց հիմնուելուն մի խոշոր նուիրատուութեամբ եւ իր ծախքով մի մեծ եւ գեղեցիկ շինութիւն կառուցած այդ դպրոցի համար։ Երախտագէտ հայ վաճառական դասակարգն, որի խնամքին էր յանձնուած այդ դպրոցը, Քաղաքային Վար-

© National Library of Armenia

չութեան հետ համաձայնութեամբ, բարեբարի անունով Մանթաշեանց Առեւտրական Դպրոց (Манташевская торговая школа) անունը տուին այդ համակրելի եւ բազմօգուտ հիմնարկութեան: Տասնեակ տարիներ, հարիւրաւոր հայ պատանիներ առեւտրական կեանքի են պատրաստուել այդ դպրոցում:

Նա ընդունել էր իր վրայ Թիֆլիսի քաղաքային միջնակարգ բէալական դպրոցի [2] խնամակալութիւնը (պաշտօնական կոչումը՝ պատուաւոր հոգաբարձու = почетный попечитель) եւ տարեկան մի մեծ գումար նպաստ էր տալիս, որով բազմաթիւ հայ եւ օտար չքաւոր աշակերտներ միջնակարգ դպրոցական ուսում էին ստանում այնտեղ:

Նա՝ տասնեակ տարիներ՝ մեծ թուով հայ չքաւոր ուսանողներին՝ տարեկան թոշակ էր յատկացրել, որպէս զի իւրաքանչիւրն ըստ իր արժանիքի կամ միտումի, բարձրագոյն ուսում ստանայ ռուսական կամ եւրոպական համալսարաններում: Մանթաշեանցի այս հարիւրաւոր սաներն մեր ազգային եւ հասարակական կեանքում մեծ դեռ են խաղացել, ինչպէս պիտի յիշեմ:

Նա տարեկան որոշ կենսաթոշակով կամ միանուագ դրամական նպաստներով օգնած ու պահպանած է հայ հեղինակներին, որոնց մէջ կան ծանօթ գրագէտներ, ինչպէս պիտի տեսնենք:

Նա կառուցել է Թիֆլիսում Ներսէսեան թեմական դպրոցի համար մի հոյակապ ընդարձակ շէնք:

Նա չինեց Էջմիածնում նոր կաթողիկոսական վեհարան, այնպիսի մեծութեամբ, որ այնտեղ՝ բացի կաթողիկոսից եւ եպիսկոպոսների բնակութիւնից եւ զանազան ընդունարաններից, տեղի պիտի ունենային նաեւ Համազգային ժողովները:

Նա կառուցել է Պարիզում փառաւոր հայ եկեղեցի, Jean Goujon փողոցի վրայ, իր հօր յիշատակին, յանուն Մ· Ցովհաննէս Մկրտչի:

Նա նորոգել է Թիֆլիզի հայոց Մայր Եկեղեցին (վանքի եկեղեցի կոչուած), եւ յարակից շէնքը:

Նա բազմաթիւ գաղտնի բարեգործութիւններ ունի կատարած, որոնց մի մասը միայն յայտնի է նոյն իսկ իր մերձաւորներին: Այդ գաղտնի գործերից մի քանիսը պիտի յիշեմ:

Եւ վերջապէս Աղ· Մանթաշեանց թէ՛ Թիֆլիսում կամ առհասարակ Ռուսաստանում եւ թէ՛ Եւրոպայում, զլխաւորապէս Պարիզում, նպաստած է նաեւ բազմաթիւ օտար կրթական եւ բարեգործական հաստատութիւնների:

Մանթաշեանց իր այս բարեգործութիւնները կատարում էր առանց աղմուկի, առանց որեւէ փառասիրական ձգտումի, այլ իբր բնական գործ, որովհետեւ նա որչափ համեստ էր այնչափ եւ աւելի եւս բարեսիրտ ու կարեկցող: Ջնայելով իր գրաւած մեծ դիրքին, իբրեւ խոշոր գրամատէր եւ նաւթային արքայ (roi du pétrole) ինչպէս կոչում էին նրան, նա չափազանց պարզ էր ու մատչելի ամէնքին, հարուստին ու աղքատին հաւասարապէս:

Հայ ժողովուրդը, մանաւանդ նրա կեանքի վերջին տասնամեակում, մեծապէս գնահատում էր Մանթաշեանցի այս մեծ արժանիքը: Որքան ապրում էր նա, այնքան աւելի յարգելի եւ սիրելի էր դառնում ընդհանրութեան:

Մանթաշեանցի կեանքն ու գործերը կատարեալ դասեր են հայ գրամատէրերի եւ առեւտրականների համար:

Այժմ մի խօսք էլ pro domo sua: Ես յանձն եմ առել գրել այս կենսագրականն, որովհետեւ երկար տարիներ, այն է 1894ից ի վեր բախտ եմ ունեցել Մանթաշեանցի մերձաւորը լինելու եւ նրա վստահութիւնը վայելելու, նախ իբր իր քարտուղարն, ապա իր լիազօրը եւ վերջապէս իր լայնածաւալ արդիւնաբերական–առեւտրական ընկերութեան վարիչը, սրա հիմնուելու օրից (1899) անընդհատ մինչեւ այդ ընկերութեան բռնի դադարումը, ինչպէս պիտի պատմեմ:

Միեւնոյն ժամանակ, այս պատեհ առթից օգուտ քաղելով, աւելորդ չեմ համարել արձանագրել իմ յուշերն եւ տպաւորութիւնները, այն ժամանակակից դէմքերի եւ դէպքերի վրայ, միշտ ազգային կեանքի շուրջն, որոնք առնչութիւն են ունեցել հանգուցեալ մեծ վաճառականի եւ բարեգործի կեանքի եւ գործերի հետ:

Ա·

ԺԸ· դարում երբ Վրաստան դեռ կիսանկախ թագաւորութիւն էր, թէեւ թոյլ եւ պարսից գերիշխանութեան տակ, նրա մայրաքաղաք Թիֆլիսում՝ բնակիչների ստուար մեծամասնութիւնը հայերից էր բաղկացած ինչպէս միշտ էլ եղել է քաղաքի հիմնադրութեան թուականից (Է· դար Յ· Ք·) ի վեր: Հայ մոհալաֆները (վրացերէն՝ քաղաքացի) անձուկ յարաբերութեան մէջ էին վրացի իշխանաւորների եւ նոյն իսկ թագաւորի հետ: Այդ ժամանակ, յատկապէս 1784ին, Թիֆլիսի հայ եկեղեցիներից մէկի («Բեթղեհէմի» կոչուած) աւագ քահանան, Ղայթմազեանց տէր Սամուէլը, Վրաց Էրէկլէ (= Հերակլ) թագաւորի հետ գժտուելով, ստիպուել է քաղաքից փախչել եւ Պարսկաստան ապաստանել: Նա իր հետն է տարել իր 18 ամեայ Անդրէաս անունով որդին, որ այնտեղ մեծանալով դարձել է յայտնի քաղաքական եւ պետական գործիչ Խոսրով

[2] Գերմանական Realschuleի ծրագրով, մօտաւորապէս՝ école d'industrie:

Խանը (Ղայթմազեանց): Այս Խոսրով Խանը մի փոքր է ունեցել Հռիփսիմէ անունով, որի դուստր Խորիշանից ծնուել է Թիֆլիսում Յովհաննէս Մանթաշեանց՝ մեր Աղեքսանդրի հայրը, որ մանր առեւտրական է եղել: Խոսրով խան Ցովհաննէսին կանչում է իր քովը, Թաւրիզ, եւ ամէն կերպ հովանաւորում: Այս հզօր պաշտպանի շնորհիւ Ցովհաննէսն էլ կարեւոր դիրք է ստեղծում իր համար Պարսկաստանում եւ դառնում է Եահեաբէկ:

Ցովհաննէս ամուսնացել էր Թիֆլիսում եւ այնտեղ այս ամուսնութիւնից ծնուել է 1842 Մարտ 3ին մեր հերոսը: Աղեքսանդր հազիւ 16 տարեկան էր երբ հայրը նրան Թաւրիզից բերում է եւ Թիֆլիս եւ մի ուսեալ հայ քահանայի մօտ է դնում ուսում առնելու: Այնտեղ նա սովորում է հայերէն եւ վրացերէն կարդալ գրել, ապա սովորել է եւ ռուսերէն: Չորս տարի վերջը, այն է 1864ին, Ցովհաննէս՝ Աղեքսանդրին հետն առած՝ վերադառնում է Պարսկաստան եւ այնտեղից նրա հետ միասին գնում են Եւրոպայի առեւտրական կենդրոնատեղիները, Լայպցիգ եւ Մանչեստր, որոնք նրանց առուտուրի համար կարեւոր էին: Նրանք պարապւում էին, մանուֆակտուրայի, կտաւեղէնի եւ չթեղէն գործուածքների առուտուրով: Աղեքսանդրը մնում է Մանչեստրում եւ այնտեղից շարունակ ապրանք է ուղարկում Պարսկաստան իր հօրը: Այսպէս շարունակում են նրանք գործը մինչեւ 1878, երբ հայրը, Ցովհաննէս, թողնում է Պարսկաստանն եւ վերջնականապէս հաստատւում է Թիֆլիսում, դրամագլուխ ունենալով 20·000 ռուբլի: Այս բոլորն ես անձամբ լսել եմ Մանթաշեանցից, որ ինքդրել է նոյն իսկ, որ իր այս պատմածները գրի առնեմ:

Թիֆլիսում Ցովհաննէս Մանթաշեանց մի մեծ խանութ է բանում, որի վրայ որդին յետոյ աւելացնում է երկրորդը: Նրանց գործը շատ յաջող է գնում: Աղեքսանդր շարունակ ճանապարհորդում է առեւտրական գործով Անգլիա եւ ուրիշ եւրոպական երկիրներ: Այս ճանապարհորդութիւնների շնորհիւ նա սովորում է նաեւ անգլիերէն եւ ֆրանսերէն խօսել եւ մի փոքր էլ գրել: Նա մի քիչ էլ գերմաներէն էր խօսում:

Նրանք իրենց ապրանքը ծախում էին գլխաւորաբար en gros Թիֆլիսի եւ առհասարակ Կովկասի առեւտրականներին: Աղեքսանդր 20 տարեկան հասակից գործերի դեկն իր ձեռքն էր առել, բայց միշտ հօրը հսկողութեան տակ էր: Ցովհաննէս Մանթաշեանց վախճանուեց 1887ին: Աղեքսանդր սաստիկ սիրում էր իր հօրը եւ խորապէս դգածուած էր նրա մահից: Նա երբեք չէր դադարում, երբ առիթը պատահէր, իր հօր մասին խօսելուց եւ զանազան արկածներ էր պատմում նրա կեանքից: Նա սիրում էր պատմել նաեւ Թիֆլիսի միւս հայ վաճառականների վերաբերմունքը երբ ինք դեռ «մանիֆակտուրիստ» էր: Նրա նախածնողներից մէկը մի օր նրա երեսին ասել է Թիֆլիսի բարբառով· «Թէ իս (ես) Լոնդուն չիմ գնացի, փուղ (ստակ) չիմ աշխատի՞···»: Այս ակնարկութիւնը նրա եւրոպական ճանապարհորդութիւնների մասին, խորապէս ազդել էր նրա վրայ եւ երբեք չէր մոռանում: Հօր մահից յետոյ Մանթաշեանց մի երեկոյ իր հաշուեկշիռը կազմելով եւ իր հարստութեան աճելը տեսնելով ուրախ ուրախ անցնում էր Թիֆլիսի «հայկական չուկայ» (Армянскій базар) կոչուած փողոցով, սուն գնալու համար երբ նրա սովորական յաճախորդներից մէկը, մի հայ առեւտրական, նրա այդ զոհ տրամադրութիւնն եւ քալուածքը տեսնելով, ետեւից կանչում է· «Էնէնց է գնում, կարծես էրկու հարիր հազար ունենայ»: Մանթաշեանց ետ է դառնում· նրա դրամագլուխը, ըստ նոր հաշուեկշռի, ճիշդ երկու հարիւր հազար ռուբլի էր···: «Էդ մարդը ինչպէ՞ս գուշակեց» կրկնում էր նա շարունակ:

Իր հարստութեան աճման հետ Մանթաշեանց ընդարձակում է իր յարաբերութիւնները դրամական եւ առեւտրական ասպարէզներում: Ամէնից յառաջ նա ուշադրութիւն է դարձնում «Թիֆլիսի Առեւտրական Բանկ» կոչուած դրամատան վրայ, որի թէ բաժնետէրերը եւ թէ յաճախորդները գրեթէ բացառաբար հայեր էին: Սա ամենամեծ մասնաւոր բանկն էր ոչ միայն Թիֆլիսում այլ եւ ամբողջ Կովկասում: Մանթաշեանց կամաց կամաց բանկի բաժինները գնելով, դառնում է նրա գլխաւոր բաժնետէրը, ընտրւում է բանկի նախագահը (վարչական խորհրդի) եւ այնուհետեւ ամէն ինչ կարգադրում է այնտեղ ըստ իր հայեցողութեան: Բանկի վարչութիւնը, խորհրդի անդամներն եւ նոյն իսկ պաշտօնէութիւնը նրանից կախում ունէին, քանի որ Ընդհանուր ժողովի մէջ ձայների մեծամասնութիւն ունէր: Բանկի բոլոր յաճախորդները, այսինքն Թիֆլիսի բոլոր առեւտրականները, որոնք գրեթէ ամբողջութեամբ հայ էին, մեծապէս ակնածում էին նրանից, որովհետեւ իրենց վարկի պահպանումը կամ աւելացումն ու կրճատումը նրանից էր կախուած: Այդ ժամանակ Թիֆլիսում կային անշուշտ ուրիշ բանկեր, ինչպէս՝ Ռուսական Պետական բանկի բաժանմունքն, որ շատ քիչերին էր մատչելի, «Պետական Գիւղացիական բանկի» բաժանմունք, «Վրաց Ազնուականութեան Կալուածական Բանկ» եւ ապա երկու «Քաղաքային վարկի Ընկերութիւններ» եւ «Փոխադարձ վարկի Ընկերութիւն», բայց սրանք տարբեր եւ սահմանափակ ծրագիրներով էին գործում: Ի մէջ այլոց վերջին երեք բանկերը նոյնպէս հայոց ձեռքն էին: Մանթաշեանցի մահից (1911) յետոյ միայն,

© National Library of Armenia

մի քանի հայ վաճառական, իրենց հետ առնելով բաքուցի հայ դրամատէրեր, բացին «Թիֆլիսի վաճառականական բանկ» (Тифлисскій Купеческій банк) կոչուած հաստատութիւնը յիշեալ «Առեւտրական բանկի» ծրագրով, եւ սկսան մրցիլ այս վերջինի հետ: Այնուհետեւ Պետերբուրգի եւ Մոսկուայի մեծ ռուսական բանկերն էլ իրենց ճիւղերը բացին Թիֆլիսում եւ ուրիշ քաղաքներում:

Երբ Մանթաշեանց ամբողջովին նուիրուեց Բաքուի քարիւղի արդիւնաբերութեան, նա բանալ տուեց իր «Առեւտրական բանկին»՝ երկու նոր ճիւղ, մէկը Բաքու, միւսը Բաթում, այն տեղերն, որոնք իր նոր գործունէութեան գլխաւոր կենդրոններն էին: Իր դրամական յարաբերութիւններն այդ ճիւղերի միջոցով էր կատարում, որով կրկնակի օգտւում էր: Հետզհետէ նա աւելի եւս սկսեց տարածել իր ուշադրութիւնը բանկային գործերի վրայ եւ զգալի մասնակցութիւն ունեցաւ Պետերբուրգի երկու մեծ ռուսական բանկերի մէջ եւ ընտրուեց նրանց Վարչական Խորհրդի անդամ, թէեւ շատ քիչ էր յաճախում, այն է՝ միայն երբ Կովկասից Եւրոպա գնալ գալու ժամանակ, անցնում էր Պետերբուրգից: Այս կերպով նա յայտնի դարձաւ բոլոր դրամատիրական շրջաններին, նախ Ռուսաստանում եւ ապա Եւրոպայում, գլխաւորաբար Պարիզում եւ Լոնդոնում, իբրեւ մեծ դրամատէր եւ «քարիւղի արքայ»: Այս կոչումը ճիշդ էր, որովհետեւ Մանթաշեանց՝ իր դրամական ոյժն եւ հեղինակութիւնն ամբողջապէս պարտական էր Նաւթային արդիւնաբերութեան եւ մեծ դեր էր խաղում դրա մէջ: Հօր մահից յետոյ նա բոլորովին զաղարեցրեց Թիֆլիսի առուտուրն, որ այլ եւս չէր գոհացնում նրան: Նա պահանջ էր զգում աւելի մեծ, աւելի բազմակողմանի առեւտրական գործունէութեան: Այս գործունէութիւնը նոր գտաւ քարիւղի (pétrole) արդիւնաբերութեան եւ առեւտրի մէջ: Բաքուն՝ իր այս սեւ ու հում ձէթովը, այն մագնիսական ոյժն է եղած՝, որ երկար տարիներ, բայց առանձնապէս 1880ից սկսած, քաշած է հայ ձեռնարկուներին իր կողմը: Այդ է եղած Կովկասի հայոց հարստութեան գլխաւոր աղբիւրը: Դրա շնորհիւ հազարաւորներ մեծ կարողութեան են տիրացած եւ բիւրաւորներ՝ շատ ապահով նիւթական վիճակ են ստեղծած իրենց համար: Սրանք էլ իրենց կարգին իրենց նիւթական բարօրութիւնը տարածել են իրենց ընիկ գաւառներում, որով օգտուել է հայ ժողովրդի զգալի մի մասը: Բացի դրանից Կովկասի հայոց տնտեսական ոյժի աճման հետ զուգընթացաբար աճել են նաեւ այն միջոցներն, որոնք պէտք է դարկ տային մեր ժողովրդի կրթական ու հասարակական պիտոյքին: Այս կերպով Բաքուի կամ առհասարակ քարիւղի շնորհիւ Կովկասի հայոց մեծ մասի թէ՛ տնտեսական եւ թէ՛ մտաւորական մակարդակն է բարձրացել: Ի նկատի ունենալով այս հանգամանքը ես անհրաժեշտ եմ համարում մի առանձին Գլուխ նուիրել Բաքուի Նաւթային արդիւնաբերութեան եւ այնտեղ հայոց ունեցած մասնակցութեանն ու կատարած դերին:

(Շարունակելի:) ՍԱՐՈԽԱՆ

ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ՔԷՕՄԻՐՃԵԱՆ
ՑԱՌԵԼՈՒԹԵՐԸ
ԹԱՆՕԹԱԳՐՈՒԹԵԱՆՑ

Ա· ԳԼՈՒԽԻՆ

10դ տողին համար: — Ազգ· Հիւանդանոցի «Ս· Փրկիչ» մատուռը անձամբ օծած է 1906ին Մաղաքիա Պատրիարք Օրմանեան: Այս մատուռը քարուկիր է, կոկիկ ու սիրուն, որու ճակատը զրօշմուած է հետեւեալ Յիշատակութիւնը·

«Տաճարս Ս· Փրկչին
Փայտակերտ կառուցաւ զառաջինն յամին
1833
Ի Հոգելոյս Պեզճեան Յարութիւն ամիրայէ:

—

Զարդիս վերստին կառուցաւ ի հիմանց
տունս սրբութեան
Ի տեղւոջս գթութեան՝ արդեամբ եւ ծախիւք
բարեպաշտն
Տեարց Ագաթանայ եւ Կարապետի հարազատաց Թահտապարանեան
Ի յիշատակ եւ ի հանգիստ հոգւոյ եղբօր
իւրեանց Դիոգինեայ
Վաղաժամ վախճանելոյ յամին 1898, եւ
Տեառնագրեցաւ
Յանուն ամենասուրբ Փրկչին ի կաթողիկոսութեան
Տ· Տ· Մկրտչի եւ ի Պատրիարքութեան
Տ· Մաղաքիայ· յամին 1906 ՌՅԾԵ»:

—

Ազգ· Հիւանդանոցի պարտէզը թաղուած են Կիւլպէնկեան ականաւոր բարերարները, Սերովբէ († 10 *Փետրուար* 1886) *եւ իւր կինը՝* Հռիփսիմէ († 20 *Նոյեմբեր* 1888):

Սարգիս († 13 *Յունուար* 1893) *եւ կինը՝*

Տիրուհի († $\frac{19\ \textit{Մայիս}}{1\ \textit{Յունիս}}$ 1908):

Յովհաննէս († 9 *Յունուար* 1894) *եւ կինը՝* Արաքսի († 5 *Փետրուար* 1894):

Տիկին Վերժին Պ· Կիւլպէնկեան († 25 *Յունուար* 1903):

Հոն թաղուած են նաեւ՝

Յովհաննէս Յակոբեան († 14 *Մարտ* 1908) *եւ կինը՝* Երանուհի († 3/15 *Փետրուար* 1922), *եւ* Ստեփան Սպարթալը († 9 *Օգոստոս* 1918):

Եւ ամենէն վերջն ալ՝ Տոքթ· Դանիէլ Հանըմեան, *այն անձնուէր երիտասարդ բժիշկը, որ ապերախտ հիւանդէ մը զնդակահար եղաւ* 1922 *Մայիս* 1ին, *Հիւանդանոցէն ո՛չ շա՛տ հեռու եւ չարաչար տագնապներու մէջ մեռաւ վեց օր յետոյ:*

Խիստ փառաւոր եղաւ նահատակ Հայ բժիշկին Յուղարկաւորութիւնը Ազգ· Հիւանդանոցին մէջ· տասնէ աւելի զամբանականներ՝ ամէն լեզուէ, արտասանուեցան անոր զգաղին շուրջը[1] *եւ Կ· Պոլսոյ Հայ բժշկական Միութեան պահանջումովը հէգ Հանըմեանի մարմինը ամփոփեցաւ Ս· Փրկիչ մատուռին ետեւը:*

Հանգուցեալին ծնողքը գերեզմանին վրայ կանգնեց շիրիմ մը, արձանագրութեամբ հետեւեալ յուզիչ վերտառութեան, զոր ակնարոյժ Տոքթ· Էտ· Շահպազ բարեկամս եւ Հիւանդանոցին Տնօրէնը՝ Տիար Մ· Այվազեան միաժամանակ յղեցին ինձ 1929 *Նոյեմբեր* 1ին:

Տոքթ· Դանիէլ Հանըմեան
1891—1922

—

«Առաւօտ մը Մայիսի երբ բնութիւնը նոր
կեանք կը զգենուր, կեանքիդ Մայիսին մէջ՝ դուն
հրաժեշտ տուիր կեանքին· անգութ ձեռք մը
որ վարդիդ գեղն ու բոյրն էր վայելած,
կուրօրէն ճմլեց վարդդ, բարունակն ալ միասին:
Կեանքդ գիտութիւն, արիւնդ ալ հուսկ կաթիլ,
զոհ բերիր ի սփոփանս մարդուն ցաւին,
տանջանքին, արժանիքով բեռնաւոր, դուն ոստին
եղար նմանակ՝ որ ծանրաբեկ կ'իյնայ բեռին տակ
իր բերքին
1922 *Մայիս* 1»:

—

34 տողին համար: — *Նաւը Գարուի* Խորենեան–Վասվասեան *վարժարաններու հիմնադիրներն եղած է՝ Վառօդապետ Յովհաննէս Ամիրայ Տատեան*[2]:

Նշանակած եմ արդէն (էջ 203) թէ Նաւը–Գարուի Ս· Յովհաննէս Եկեղեցին առաջին անգամ հաստատուած է[3] 1803ին *եւ վերաշինուած,* 1807ին: *Այս վերաշինութեան հարիւրամեակն էր որ ուզուեցաւ տօնել* 1907ին, *եւ այդ առթիւ Ա· Ալպոյաճեան հրատարակեց պատմական խիստ լաւ տեսութիւն մը*[4] *նաեւ Եկեղեցիին Արձանագրութիւնը, որ էր հետեւեալը եւ զոր ես ալ անձամբ ընդօրինակած եմ ժամանակին՝ մարմարեայ խոշոր քարի մը վրայէն, որ կը մնար թաղական խորհրդարանին մէջ: Աւասիկ այն նոյնութեամբ,* 10 *տող եւ բոլորգիր փորագրուած:*

«Աստուծոյ անհուն ողորմութեամբն, ի Տեառն Դանիէլի սրբազան կաթողիկոսի Հայրապետութեան եւ ի Տեառն Յովհաննէսի արքեպիսկոպոսի պատրիարգութեան, հրաշափայլս տաճար՝ որ յԱնուն Սրբոյն Յովհաննու Աստուածաբան Աւետարանչի, ի ձեռն ջանից Ազնաւորեան Կարապետ Ամիրայի՝ եւ պաշպազիրկեան միւթէվվէլի մահտեսի Յովհաննէս Աղայի, եւ Խաբամանի Տաճեսեան Նազըր Յովհաննէս աղայի եւ Տիլպէնտեի Պարոն Մկրտչի, եւ Տէր Ղուկաս վարժապետի: Եւս ֆիւրֆեի մահտեսի Յարութիւնի: Ոսկերիչ Պարոն Պօղոս, Խալբախճի Պարոն Դաբրիէլ եւ Պարոն Պօղոս, Պարոն Մեռկերիչոս եւ էֆէնտիի Պարոն Պետրոս՝ Հոգեսանս հոգեբարձուաց աշխատութեամբ կառուցաւ ի Յիշատակ իւրեանց, եւ համայն Ազգիս ի ՌՄԾԶին (1807)»:

—

Բայց այս Եկեղեցիին տարիներ առաջ 1794ին *շինուած է կամարակապ քարուկիր*

[1] *Իմ Դամբանականս հրատարակուած «Ժողովուրդի Ձայն» թերթին մէջ:* 1922 *Մայիս* 10:

[2] Տարեցոյց Ս· Փրկչեան Ազգ· Հիւանդանոցի, *տարի* 1901, *էջ* 232:

[3] Պատմ. Ա. Պէրպէրեանի, *էջ* 51 *եւ* 445:

[4] Բիւզանդիոն, *թիւ* 3369, 6 *Նոյեմբ·* 1907:

© National Library of Armenia